ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2024 Թ. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

(Հանրակրթության նոր չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան)

Երևան-2024

Պատասխանատու՝ **Մերի Սարգսյան**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....3

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.....4

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ.....4

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ.....5

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են 2024 թ. Տավուշի մարզում ըստ փորձարկվող նոր ծրագրի կազմված ‹‹Աշխարհագրություն›› առարկայի միասնական քննության թեստերի առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները, կառուցվածքը:

2024 թ. միասնական քննության համար որպես հիմք են ընդունվել *՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023թ մարտի 30-ի N24- Ն հրաման,* «Հանրակրթական ուսումնական հաստատություններում **«Աշխարհագրություն» առարկայի 7-8-րդ, 10-12-րդ և «Հայաստանի աշխարհագրություն» առարկայի 9-րդ դասարանների առարկայական չափորոշիչ»-ը,** ***Տավուշի մարզում փորձարկվող հիմնական և ավագ դպրոցների համար երաշխավորված Աշխարհագրության նոր դասագրքերը, ուսուցողական նյութերը, գործնական աշխատանքների ձեռնարկները, ինչպես նաև «Աշխարհագրություն» առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների շտեմարանները՝ համապատասխան փոփոխություններով:***

Քննական թեստերը կազմվում են «Շտեմարաններում» առկա առաջադրանք–ներից և «Շտեմարանների» առաջադրանքների հիմքի վրա կազմված նոր առա–ջադրանքներից, ինչպես նաև *գործնական աշխատանքների* հիման վրա կազմված առաջադրանքներից:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«Աշխարհագրություն» առարկայի միասնական քննական թեստը գնահատվում է 80 միավոր: Թեստում առաջադրանքները երեք կառուցվածքային տիպի են՝ ընտրովի պատասխանով, կարճ պատասխանով և «Պնդումների փունջ»:

Թեստում 55 միավոր են գնահատվում ընտրովի պատասխանով առաջադրանքները, որոնք ընդգրկում են Աշխարհագրության նոր առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները և գործնական աշխատանքները, 25 միավորը՝ կարճ պատասխանով առաջադրանքները և ենթաառաջադրանքները, որոնցից ***8-ը կարճ պատասխանով առաջադրանք են, իսկ 2-ը՝ «Պնդումների փունջ» են, որոնք ընդգրկում են Աշխարհագրության առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները և գործնական աշխատանքները, ըստ նոր ծրագրերի և չափորոշիչների:***

Միասնական քննական թեստի առաջադրանքների կատարման համար տրամադրվում է 180 րոպե:

Բուհ ընդունվելու համար միասնական քննության միավորը հաշվարկվում է 20 միավորանոց սանդղակով՝ հիմնվելով ամբողջ աշխատանքի կատարման արդյունքում դիմորդի հավաքած միավորների վրա:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

«Աշխարհագրություն» առարկայի միասնական քննական թեստում առաջադրանքներն ընտրվում են համաձայն հանրակրթական դպրոցի ‹‹Աշխարհագրություն›› առարկայի ուսումնական նոր չափորոշիչի և ծրագրերի, որը կազմվել է ըստ հետևյալ հիմնական գաղափարների՝

1) Երկրագունդ. պտույտներ, ոլորտներ.
   - ա) Երկրի պտույտներն ու դրանց աշխարհագրական հետևանքները,
   - բ) Քարոլորտ. կազմը, կառուցվածքը, դրանում ընթացող գործընթացները, և դրա պահպանությունը,
   - գ) Ջրոլորտ. կազմը, դրանում ընթացող գործընթացները և դրա պահպանությունը,
   - դ) Մթնոլորտ. կազմը, կառուցվածքը, դրանում ընթացող գործընթացները, և դրա պահպանությունը,
   - ե) Կենսոլորտ. էկոհամակարգեր, դրանց պահպանությունը:
2) Տարածական մոդելավորում և տվյալներ.
   - ա) Քարտեզ և հատակագիծ, աշխարհագրական դիրք,
   - բ) Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ): Տեղորոշում:

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Քննական սենյակում թույլատրվում է ունենալ հաշվիչ։